Ժ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905 — ԿԱՌՆԱ — ԹԻՒ 73

ԳԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու թիւը մէկ ծրարով
Տարեկան . . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

Ծանուցման տողը 20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)

Редакция на вѣстникъ „Иравунк“ ВАРНА

Գրութիւնք ետ չեն տրուիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ն. Ա. Բարձրութեան Իշխան Ֆէրտինանտի այս անգամ Բարիզ այցելութիւնը եւ Ֆրանսական հանրապետութենէն անոր գտած թագաւորավայել ընդունելութիւնը ուշագրաւ պարագաներ են այն պահուն, երբ Պոլսոյ մէջ վեց մեծ պետութեանց դեսպաններուն և Սուլթանի կառավարութեան միջեւ մակեդոնական խնդիրը տաք կերպով կը յուզուի միջազգային հակակշիռ [գոնթրոլ] հաստատելու ձեւին տակ։

Սուլթանը սրչափ սր Պուլգարիոյ Իշխանին վրայ պարզ վալիի մը աչքով նայիլ ձեւացնէ յայտնի է թէ Լուի-Ֆիլիպի այս խորագէտ թոռը իր գահակալութենէն ի վեր գիտցաւ փոքրիկ իշխանապետութեան գործերը վարել եղական ճարտարութեամբ մը և ինքզինք ու իր երկիրը դնել բարձր դիրքի մը վրայ որ երբէք չէր սպասուեր իր գահակալութեան առաջին օրերուն (1887), երբ Ռուսիան և բոլոր Եւրոպան իր դէմը կը գտնէր և միայն իրեն զօրավիգ ունէր հանգուցեալ Սթանպուլովի ահարկու կորովամտութիւնը և Իր հաստատակամութիւնը։ Ֆէրտինանտ Իշխանին և մեծ պուլգարին, Սթանպուլովի, խորամանկութիւնը ու ճարպիկութիւնը յաջողեցան Մակեդոնիոյ մէջ կարգ մը պուլկար տէսբոթներ և շատ մը վարժապետներ հաստատել, հակառակ Ցունաց Պատրիարքարանի ընդդիմութեանը, հետզհետէ եւրոպական արքունիքներու հետ յարաբերութիւններ մշակել, երկիրը իր յետադիմաց վիճակէն օրէ օր զարգացման ճամբուն մէջ դնել և վերջապէս օրին մէկը—և այս միմիայն Իշխանին ճարտարամտութեամբը—Սթանպուլովի անկումէն յետոյ—ճանչցնել եւրոպական պետութեանց, նաև Ռուսիոյ եւ Թուրքիոյ, Ֆէրտինանտ Իշխանին վեհապետութեան օրինաւորութիւնը, անոր անդրանիկ որդւոյն, Իշխան Պորիսի, յաջորդութեան իրաւունքը, իբր գահաժառանգ։ Եւ այս ամենէն աւելի, յաչս պետութեանց կարեւոր տեղ բռնողը Պուլկարիոյ այսօրուան ներկայացուցած զինուորական ուժն է, որ կը գերակշռէ պայգանեան միւս ազգերունը։ Կ. Պոլսոյ դուռներուն մօտ 300000 լաւ մարզուած զինուորներու մեծ բանակի մը պետն է որ այսօր Բարիզի մէջ արքայավայել ընդունելութիւն կը գտնէ, երբ ասդին Սուլթանի կառավարութիւնը կը յամառի Մակեդոնիոյ ելեւմուտքը եւրոպական հակակշռի տակ չը դնելու համար։ Այս միջոցիս Իշխան Ֆէրտինանտի Բարիզ այցելութիւնը առնչութիւն պէտք է ունենայ օրուան տաք խնդրոյն հետ. ատիկա պարզ զուգադիպութիւն մը չէ կարելի համարել։

Սուլթանին այս վերջին յամառութիւնը ձեռքի տակէ Գերմանիոյ կողմէ քաջալերութեան մը արդիւնքը ըլլալ կը կարծուի. իսկ Ֆրանսայի կողմէ Իշխանին ընծայուած ջերմ ընդունելութիւնը հակացոյց մը կը նկատուի Գերմանիոյ Սուլթանին ընծայած քաջալերութեան։

Դրան մերժումին դէմ, այսօր դեսպանները իրենց պետութիւններէն հրահանգի կը սպասեն թէ ինչ միջոց ձեռք առնելու են։ Վաղը եւրոպական դահլիճներէ ստացուելիք պատասխանները ցոյց պիտի տան որոշ կերպով Գերմանիոյ դիրքը հանդէպ մակեդոնական խնդրոյն։ Իշխան Ֆէրտինանտի Բարիզ ներկայութիւնը ապահոված ըլլալ կը կարծուի Ֆրանսայի, Անգլիոյ և Ռուսիոյ համերաշխութիւնը Սուլթանին դէմ ճնշում գործադրելու մասին. հաւանականաբար Իտալիա այս երեքին պիտի հետեւի. Աւստրիա ևս Մ՚ուրցստէգի կարգադրութեամբ չէ կարող տարբեր ճամբայ բռնել։ Միայն Գերմանիան է, որ կասկածելի կը մնայ և յոյս կը ներշնչէ Սուլթանին թէ անոր շնորհիւ պետութեանց համաձայնութիւնը վիժի։

Տեսնենք։

ԿՈՎԿԱՍԻ ԴԻՊՔԵՐԸ

—[o]—

«Բազմէք»-ին եւ մայրաքաղաքներու ուրիշ թերթերին հեռագրում են Թիֆլիսից, որ սեպտեմբերի 12-ին Զիւանչիրի գաւառում Թառքառ գետին ափին գտնուած Լեւոնարիս կոչուած տեղում, Թուրքերը ոմն Ասկեարխանի առաջնորդութեամբ յարձակում են գործել դաշտում աշխատող մալականների վրայ։ Մեծաթիւ նպանց, Թուրքերը յետ են անում եղների լուծը եւ սպառնալիքով պահանջում. որ նրանք հեռանան Կովկասից, ասելով. «Այստեղ այլեւս ռուսաց իշխանութիւն չկայ. այստեղ այժմ տիրում են մեր խանները. այս հողերն մերն են, կորէք, քանի չենք սպանել ձեզ»։ Մալականները սարսափահար դիմել են նահանգապետի օգնութեանը։

—

ԲԱԳՈՒ. 1 հոկտեմ.— Նաւթարդիւնաբերողների երկրորդ խորհրդակցութիւնը որոշեց աշխատանքները չվերականգնել, մինչեւ որ գործերը կանոնաւորապէս չը բաշխուին, տեղացիներից կազմուած ստիկանութիւնը չհեռացուի, աւերիչները դատի չմատնուին, ամբողջ բնակչութիւնը եւ ոչ թէ միայն հայերը զինաթափ չլինեն եւ մինչեւ որ նահանգապետը չյայտարարէ, որ ամեն ազգութեան պատկանող բանուորներն ապահով վիճակի մէջ են։ Առանձին ֆիրմաներ արաղօրէն վիշկաներ են կառուցանում։ Հիւսների անապէն պահանջ կայ։ («Պետ. գործ.»)։

—

ԳԱՆՁԱԿ, 26 սեպտ.— Հայերը Զիւանչիրի գաւառում գերի են բռնել մի ազդեցիկ բէկի։ Հայերի եւ Թուրքերի միջեւ ընդհարման դէպքեր նկատուում են Զիւանչիրի եւ Զանգեզուրի գաւառներում, ուր դեռ եւս չի եղել զեն. Տակայշվիվիլին. միւս գաւառներում անդորրութիւն է տիրում։ («Ռուս. Գործ.»)։

—

Սեպտ. 30-ին Թիֆլիսից երկաթուղու կայարանում մի արկղ փամփուշտ բռնուեց։ Արկղի երեսին մակարոն էր դարսուած, իսկ տակը՝ փամփուշտ։ Թուրքերը նաեւ վարձել էին մի ռուս կնոջ, որը Երեւան էր տանելու մի մեծ զամբիւղ՝ լիքը փամփուշտով ու տարբանակով։ Զամբիւղի երեսին հուն էր ածած։

—

ՂԱՐԱՋԻՆԱՈՒՑ [Զիւանչիրի գաւ.] մեզ գրում են.—Մեր գիւղն են ժողովուել շրջակայ հայ գիւղերի շինականները։ Ներկայումս շրջապատուած ենք Արփաւոտ. Բարգա եւ այլ թրքաբնակ գիւղերի ձիաւորներով։ Սպանուել է մեր տոնուտէրը. եւ մի քանի հոգի էլ վիրաւորուել են։ Զօրքի օգնութեանն ենք սպասում։

—

ԵՒԼԱԽԻՑ գրում են մեզ.—Հոկտ. 2-ին Բարգա գիւղի պրիստաւի թղթատար թուրքն այստեղ երկու հայ երիտասարդներից իրենց սեպհական ատրճանակներն է խլում, չնայելով որ հայերը զէնք կրելու արտօնութիւն են ունենում։ Վերջիններս բողոքում են ռուս սարաժնիկների գլխաւորին, որը մարդ է ուղարկում թուրքի ետեւից. բայց թուրքը հայհոյելով ճանապարհ է դնում իրեն կանչել եկողին։ Ռուս սպայի հրամանով մի քանի սարաժնիկներ են գնում եւ յիշեալ թուրքին ձերբակալելով բերում։ Նրանից վերցնում են ատրճանակները եւ յանձնում իրենց տէրերին։ Թուրքն սկսում է ճղռալ բղաւել, հայերիս կրծքը հայհոյել։ Թուրքերը լսելով նրա գոռում.գոչումը ժողովում են իրենց ազգակցին ազատելու նպատակով, Տեսնելով որ խուժանը հետզհետէ աճում է, ձերբակալուած թուրքին բաց են թողնում որպէսզի արիւնահեղութիւն չառաջանայ։

—

—Վերջերս քաղաքիս հայերն իրաւունք ստացան առանձին սպանդանոց բանալու, եւ Թուրքերն այդ իրաւունքի մասին հէնց որ իմացան սկսեցին բողոքել, որ այդ հանգամանքն սպառնում է իրենց առեւտրին մեծ վնաս տալ։

—

Հաւասի ազբիւրից հաղորդում են «Վոզրոժդենիէ» լրագրին, որ պրինց Լուի Նապոլէոնը չուտով ճողնում է Երեւանի ժամանակաւոր ընդհա-

նուրբ-նահանգապետի պաշտօնը։

—

ԳԵՕՐԻՍԻՑ [Զանգեզուրի գաւառ.] Մեզ գրում են.—Մեր գաւառի Թիւրքարնակ գիւղերը զինուել են, օր չէ անցնում, որ չլսենք թէ այս կամ այն հայ գիւղը Թալանի ենթարկուեց։ Այդ հանգամանքն իւնկատի առնելով, մի քանի հայ գիւղերի երիտասարդներ ի մի գումարուելով պահպանում են հայ գիւղերը Թուրք Բայնանդուր, Հեսարք, Բեսսալար, Մայիբէկլու եւ Զաղազար գիւղերի Թուրքերի յարձակման դէմ։ Վերջապէս Թիւրքական յարձակումներից խիստ վրդովուած հայ գիւղացի երիտասարդներն առաջ խաղալով աւերեցին վերոյիշեալ Թրքական գիւղերը։ Այդ բանից յետոյ Թուրք տարրը մեր կողմերը մի փոքր խաղաղասէր է դարձել։

ՆՈՐ—ԴԱՐ

ՈՎ Է ՄԵՂԱՒՈՐ

Բ

Ցայտնի է, որ հայերը, որքան էլ նրանք կովկասեան վարչութեան կողմից հակապետականներ ճանաչուած լինէին, իրենք իրենց կողմից ոչ մի չար դիտաւորութիւն չէին տածում դէպի ռուսաց պետութիւնը։

Միայն 1903 թուականի օրէնքի հրատարակուելուց յետոյ սկսուեց հայերի մէջ մի խուլ աղմուկ, տրտունջ, դժգոհութիւն. նրանք զգացին, որ իրենց գոյութեանը, ազգային ինքնուրոյնութեանը, լեզուին ու կրօնին մահացու հարուած է տրուած։

Եկեղեցական գոյքերի գրաւման ժամանակ տեղի ունեցան նոյն իսկ զինեալ ընդդիմադրութիւններ պետութեան պաշտօնեաներին. դա դաւաճանութիւն չէր, այլ յուսահատ սրտի կատաղի բողոք։

Ահա այս բանը առիթ դարձաւ կարծելու ոմանց թէ հայերի մէջ սկսուած է վտանգաւոր մի շարժում դէպի ռուս պետութիւնը։

Սկսուեց չարաբաստիկ ռուս-ճապոնական պատերազմը. պետութեան այլ եւ այլ կէտերում դժգոհ տարրերը գլուխ բարձրացրին նպատակ ունենալով օգտուել տէրութեան նեղ վիճակից։

Կովկասեան վարչութեան վախեցած աչքերին, նրա հիւանդ երեւակայութեանն այնպէս թուաց, թէ իւր խնամքին յանձնուած երկրի վիճակն էլ շատ ապահով չէ այդ վտանգաւոր շարժումից, եւ սկսեց հոգս քաշել Կովկասն ապահովելու իւր սեպհական միջոցներով։

«Բաժանենա, զի տիրեսցես»։ Ահա սա եղաւ նրա նշանաբանը, եւ նա սրբութեամբ հետեւեց այս սկզբունքին։

Թէեւ 1903 թուականի դէպքերից յետոյ, այս վերջին խառնակութիւնների ամբողջ ընթացքում հայերը ոչ միայն կովկասեան ազգերի շարքում, այլ եւ բնիկ ռուսների հետ համեմատած, իրենց ամենից կորրեկտ պահող ժողովուրդն էին, բայց եւ այնպէս դարձեալ չէր իմացուում, թէ ինչու կասկածի ամենամեծ մասն ընկնում էր հայերի վրայ։ Ուրեմն՝ պէտք էր հայերին զսպած պահել։

Թուրքերը որպէս վայրենի ոյժ կարող էին այս դէպքում բաւական ազդեցիկ դեր խաղալ՝ կազմելով սպառնական մի բանակ հայերի հանդէպ։

Թուրքը յիմար չէ. նա իրեն յատուկ հոտառութեամբ իսկոյն զգաց, թէ բանն ինչումն է, եւ պատրաստուեց օգուտ քաղել հանգամանքից։

Նա վաղուց թագցրած ծրագիրներ ունէր, եւ ուրախ էր, որ այժմ յարմար առիթ է ներկայանում նրանց իրագործելու, այն էլ օրինական հիմքի վրայ, Կովկասի վարչութեան թեւերի հովանու տակ։

Մուսուլման աշխարհը պատերազմի սկզբից լարուած ուշադրութեամբ եւ մեծ գոհունակութեամբ հետեւում էր ռուս զէնքի անյաջողութիւններին, հեռաւոր արեւելքում։ Թիւրքիան այդ ժամանակամիջոցում վարակեց մեզ համիսլամական մոլի քարոզիչ ագիտատորներով. նա հեղեղեց Կովկասը զանազան ֆանտատիկ կոչերով։

Հանելուկ է, թէ ինչ էր անում այդ ժամանակ Կովկասի վարչութիւնը։ Բայց թողունք այդ։

Ֆանատիկոս քարոզիչներն իրենց նպատակների իրագործման համար ամենից պարարտ հող գտան Բագուում, ուր թէ բաւականաչափ փող կար, թէ սիւթուկաւոր մոլլաներ եւ թէ յաւակնոտ, փառասէր հաջիներ...։

Թուրք համիսլամիստների սերձաւոր նպատակը շատ պարզ էր. բաց թողնել մի երկու փորձնական օդապարիկներ եւ ուշի-ուշով հետամուտ լինել, թէ ինչպէս կր նայի այդ բանի վրայ Կովկասի վարչութիւնը. հասարակական կարծիքը, թէ ինչ հաւատով կը վերաբերուի դէպի իրենց գործը թուրք ամբոխը, եւ թէ ինչ չափով դիմադրութիւն կարող է ցոյց տալ հայը։

Փորձը յաջող էր ըստ ամենայնի, մնում էր միայն շարունակել։

Բնած էր հասարակական խիղճը, գոհ էր ոստիկանութիւնը, որ իրեն վերջապէս յաջողուեց գտնել արմատական միջոց հայի սեպարատիզմը ջախջախելու համար։ Իսկ խորամանկ Թուրքը քթի տակին ծիծաղելով գեաւուրի կարճամտութեան վրայ՝ քառակի եռանդով ձեռնամուխ եղաւ իւր նպատակների իրագործման։

Արդ՝ ո՞վ ուժ խաբեց. Թուրքը ոստիկանութեան թէ՞ այս վերջինս Թուրքին. ո՞վ ում ձեռքին կոյր գործիք էր, Թուրքը ոստիկանութեան թ՞է ընդհակառակը։

Սակայն մի բան միայն պարզ էր, որ ժամանակի Բագուի ոստիկանութիւնն սկսեց շոյել, շողոքորթել Թուրքերին, խրախուսել նրանց քաջութիւնը եւ զինել, անվերջ զինել։

Թուրքը գերազանցեց ինքն իրեն. ադմինիստրացիան մնաց ափ ի բերան։

—

Ներկայումս մայրաքաղաքի թերթերում կան բաւականաչափ համակրելի անկեղծ հրապարակախօսներ որոնք, իրենց նպատակ դնելով լուսաբանել մեր արիւնաներկ իրականութեան ծագման պատճառները, զանազան հնթադրութիւններ են անում. ոմանք հակումն ունին Թուրքթաթարական շարժումը զուտ համիսլամական գործ համարելու, իսկ կան այնպիսիները, որոնք այդ շարժումը կապում են երկրի ընդհանուր խառնակ եւ երերուն դրութեան հետ, եւ Թուրքերին յատկացնում են խուլիգանական, սեւ հարիւրեակների կեղտոտ դերը։

Արդեօք ո՞րտեղ է ճշմարտութիւնը։

Վերոյիշեալ երկու հայեցակէտերի մէջ էլ կայ մի որոշ չափ ճշմարտութիւն. բայց թէ ի՞նչպէս այդ երկուսից մի ամբողջութիւն կազմել—ահա այս է խնդիրը։

Մեզ թւում է թէ՝ Թուրք-թաթարական ներկայ արիւնռուշտ շարժումը ներկայացնում է մի զանգուած, մի բազմահմուտ հիւսուածք վերեւում առաջ բերած երկու պատճառների։

Թուրքը խուլիգան է միայն արտաքուստ. իսկ նրա հոգին, նրա միտքն ամբողջապէս ոգեւորուած է համիսլամական գաղափարներով։

Թուրքն իրեն խուլիգան է ձեւացնում, որպէսզի վայելէ ոստիկանութեան հովանաւորութիւնը, հեռու պանէ իրենից կասկածը եւ ազատ ու ապահով ասպարէզ ունենայ առաջ քշելու համիսլամական ոչ միայն պրոպագանդան, այլ եւ նրա աւերմունքները սուրի ու կրակի միջոցով։

Թուրքը խուլիգան է, բայց ոչ սեւ դրօշի տակ. նրա գործունէութիւնը գաղափարական դրօշն է կրում. նրա աչքերին արեան կոհակների եւ ծխի ու կրակի բոցերի միջով պատկերանում է կիսալուսնի կեռ եղջիւրը իւր թեւերը տարածած դիակների կոյտերից գոյացած բլուրների եւ լեռների վրա։

Թուրքերի ներկայ դերը մեզ շատ է յիշեցնում ճապոնացւոց գործունէութիւնը Մանջուրիայում պատերազմից առաջ։ Ճապոնացի կրթուած սան, գիտնականը, ճարտարապետն իրենց նպատակներին հասնելու համար խտրութիւն չէին դնում ոչ մի միջոցի մէջ, նրանք յանձն էին առնում ե՛ւ խոհարարի, ե՛ւ սափրիչի. ե՛ւ կառապանի ե՛ւ այլ ստոր պաշտօններ առաւելի մօտ. նրանք ո՛չ սափրիչ էին ո՛չ խոհարարներ եւ ո՛չ էլ կառապաններ, այլ իրենց դաղտնի նպատակներին ծառայող լրտեսներ։

Թուրք հրապարակախօսը, միլիոնատէրը, ինտելիգենտը, հաջին այսօր յանձն առել են խուլիգանի մարդասպանի, սեւ հարիւրեակի նողկալի դերը, սակայն նրանք ո՛չ այս են եւ ո՛չ էլ այն, այլ հաւատարիմ եւ ջերմեռանդ պաշտօնեաներ համիսլամական պրոպագանդայի։

Թուրքը խուլիգանի դերում կը մնայ այնքան ժամանակ, որքան դա ձեռնտու է նրան. իսկ եթէ նա մի օր որոշ յաջողութեան հանի, աշխարհի առաջին հանդէս գուրս կը գայ իւր իսկական գոյնով, դէն կը շպրտէ իրենից անարգ դիմակը եւ կաղաղակէ։

«Կո՛ր մարդիկ, ահա ես իմ սեպհական պատկերով. տէսէք դատեցէք արդեօք խուլիգա՞ն եմ ես թէ՞ համիսլամիստ»։

Այդ միեւնոյն հարցը մենք կը դնենք այստեղ եւ կառաջարկենք հասարակաց դատաստանին։

«Թուրքը խուլիգան է թէ՞ համիսլամական»։

Կարծեմ այս հարցին երկու պատասխան չէ կարող լինել։

Արդ՝ ով է մեղաւոր։

ԱՐՏԱՂ

ԱՐԱԲԻԱ

Գ.

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

(1904 –1905—1906)

Այժմ հասած ենք ընդհանուր Արաբներու Թուրքերուն դէմ ապստամբութեան եւ բոլոր Սուրիոյ մէջ ազգային ոգւոյն զարթնումի ժամանակներուն։ Սա այսօրուան նոյնպէս վաղուան պատմութիւնն է, եւ անհրաժեշտ է գործերը կատարեալ ճշդութեամբ բացատրել։

Մենք այդ պիտի ընենք կարելի եղածին չափ յատակ կերպով։

1884 ին Ապտէլ-Ռահման-իպն-Էսաէուտ յաջողեցաւ ազատուել իր Ապտուլլահ հղբայրէն որ բոլորին ատելի էր։ Ապտուլլահ գնաց Պոլիս ապաստանեցաւ ուր փաշա եղաւ եւ անդամ Պետական Խորհուրդին։

Իպն-Էսէուտը ազատ իմաստութեամբ եւ լրիկ պարտասեց իր հօր կայսրութեան վերահաստատումը եւ նոյնպէս իր վրէժխնդրութիւնը Թուրքերուն դէմ որոնք այնչափ վայրագորէն գլխատած էին իր պապը Ապտուլլահ Պոլսոյ մէջ։ Արաբիոյ մէջ բան մը չեն մոռնար։

Իպն-Էսէուտ բարեկամացաւ Փոյվէյթի Սուլթան Մուհպարէհ Էսսապտինին, եւ անոր հետ դաշնակցութիւն մը կնքեց։ Ատով կրցաւ զէնքի պաշար ստանալ Բօլէյթի եւ Էլ-Գաթիֆի նաւահանգիստներէն։ Նոյնպէս խիստ եռանդոտ բրօքականտ մը բրաւ Միջագետքի ցեղերուն մէջ եւ անոնց յայտնեց իր ատելութիւնը Թուրքերուն դէմ։ Նոյն կերպով վարուեցաւ Գասսիմի եւ Շամէրի ցեղերուն հետ ալ, անոնց ներկայացուց Ապտէլ-Ազիզը իբր Թուրք գործակալ մը որուն նպատակն էր զանոնք հպատակեցնել եւ զինուորագրութեան ենթարկել։ Նա համաձայնեցաւ Ասիրի եւ Եէմէնի էմիրներուն հետ, օսմանեան լուծին դէմ միաժամանակ ապստամբութիւն մը յարուցանելու համար։

Շնորհիւ այս զգոյշ եւ իմաստուն քաղաքականութեան, Ապտէլ-Ռահման իպն-Էսէուտ, 1904ե առաջին հարուածին, բաւականաչափ զինուած գրտնուեցաւ յարձակելու համար Հայէլի վրայ զոր գրաւեց գատարելապէս յաղթելով Ապտէլ-Ազիզ որ փախաւ Պաղտատ ապաւինեցաւ։ Նա անոր տեղը դրաւ Նաիֆ-իպն-Էրրաշիտը, որ Թոլալի երրորդ որդին էր եւ Բիատ կը գտնուէր ինչպէս աւելի վերը տեսանք։

Այս դէպքերը իմանալուն վրայ, Թուրքերը իրենց պաշտպանեալին կողմը բռնեցին։ Վեսերրորդ բանակին մարաջախտ Ֆէյզի փաշան [այժմ եէմէնի] Բիատ մեկնեցաւ կանոնաւոր 30 զօրագունդի գլուխը անցած։ Կատարելապէս յաղթուեցաւ (մայիս-յունիս-յուլիս 1904)։

Մինչ այս դէպքերը կը պատահէին Արաբիոյ կեդրոնին եւ Միջագէտքի մէջ, Համիտ-Էտտինի որդի իմամ Մահմուտ-Եահեան ոտքի կելլէր Եէմէնի մէջ եւ Սանաան կը պաշարէր։ Եէմէնի ուրիշ ցեղերը միեւնոյն ատեն կը պաշարէին իրենց երկրին մէջ գտնուած բոլոր քաղաքները, որոնց մէջ որ Թուրք պահակազօրք կար։

Վերջապէս, նոյն 1904 տարւոյ ընթացքը արաբական ազգային կուսակցութիւն մը կը հիմնուէր Սուրիոյ

մէջ եւ յանձնախումբեր կը կազմուէին տրագրէն Պաղեստինի Սուրիոյ եւ Միջագէտքի մէջ այս երկիրները Թրքական լուծէն ազատելու նպատակաւ ։

1904 դեկտեմբերին, այս ազգային կուսակցութիւնը յայտարարութիւններ կը ցրուէր Թուրքիոյ բոլոր Արաբներուն, զանոնք Թրքաց դէմ ապստամբութեան հրաւիրելով եւ յանձնարարելով արաբ ցեղէ եղող զինուորներուն այլեւս չը կռուիլ Եէմէնի եւ Նէճէտի իրենց եղբայրներուն դէմ. Այս վաւերաթուղթը կը յանձնարարէր մանաւանդ Սուրիոյ քաղաքներու բնակիչներուն խաղաղ մնալ եւ միջամուխ չըլլալ ապստամբական ոչ մէկ գործի ։

1905 յունվարին, Բարիզի մէջ հրապարակ կելլէր խիստ շահեկան գիրք մը ամէնուն համար նոր եղող այս ինդրոյ մասին ։ «Արաբական ազգին վերազարթնումը թրքական Ասիոյ մէջ» անունով այդ գրքին մէջ կուսակցութեան ծրագիրը պարզ եւ յստակ կերպով պարզուած էր ։ Հեղինակը, Մ. Նէճիպ Ազուրի–պէյ, արդէն պետը եւ ստեղծողն է Սուրիոյ մէջ արաբական շարժումին ։

1905 մայիսին, մարաղխոտ Բիզաֆաշային հրամանատարութեամբ Եէմէն զրկուած Սուրիոյ արաբ զինուորները ապստամբներու կողմը կանցնէին զէնքերով եւ մթերքներով (22,000 հրացան, 4000 ուղտ մթերքով բեռցուցած, 14 թնդանօթներ) ։ Այս թանկագին յաւելումին շնորհիւ Արաբները գրաւեցին Սանտան եւ նահանգին ուրիշ բոլոր քաղաքները ։ Սանտայէն Թուրքերէն կրկին գրաւուիլը, առանց ընդդիմութեան հանդիպելու, Թուրքերուն եւ մարաղխոտ Ֆէյզի փաշային մէկ սխալանքն էր, համախմբուած յարմար ժամանակ ունեցաւ իր սպայակոյտին հետ պաշարուած ազատելու եւ Մէնէգայի վրայ ուղղուելու ։

Այս թուականէն ի վեր յեղափոխութիւնը տարածուած է յաջողութեամբ Ասորեստանի եւ Հիճազի մէջ եւ Թուրք կառավարիչներու իշխանութիւնը իրենց տուներու պատերէն անդին չանցնիր ։ Սուրիոյ եւ Պաղեստինի բոլոր թափառիկ ցեղերը մերժած են Թուրքերուն ասասանորդ վճարել եւ ինքզինքնին անկախ հռչակած են ։ Նոյնպէս Միջագէտքի ցեղերը ճանչցած են Իպնէսսէուտի վեհապետութիւնը ։

Թիւրքիան անկարող կը լինի զբաղելու այս բոլոր շարժումները, մանաւանդ իր բանակին երկու երրորդը կազմող արաբական ցեղէ զինուորներու մտքին մէջ ալ տարածուած ըլլալով, անոնք կը մերժեն իրենց արաբ եղբայրներու դէմ կռուիլ երթալ ։

(Էջ օրէէն) Կ. ՀՕԼՄԱՌ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

(«Նոր–Դար»–ի Թղթակցէն)

ԴԱՎՐԷԺ, 22 սեպտ.—Շնորհիւ արեգնափայլ Շահի եւ նրա ժառանգի. Ատրպատականն այժմ ազատ է գանազան պատահարներից ։ Բագուից վռնտուած Թուրք բանուորներն անցնելով Արդաբիլի վրայով՝ սաստիկ աշխատում են Ատրպատականումն էլ ստեղծել բոլշեւիկեան դիւներներ, բայց տեղիս դատաւոր Նիզամ-Սալթանէն եւ Մուշտէյիդ միրզա Հիւսէին-աղան, ինչպէս եւ Սայար Նիզամը (ոստիկանապետ), չինայելով ոչ մի ջանք, մինչեւ այժմ մեզ՝ այստեղի հայերի ազատել են եկուոր անթիւ ագիտատորների ազդեցութիւնից, որոնք ոչ մի միջոցի առաջ չեն ընկրկում ժողովուրդին եւ կառավարութեանը մոլորեցնելու ։ Բայց կառավարութիւնը հէնց որ ճանաչում է այդպէսիներին՝ իսկոյն ձերբակալում եւ աւդարկում է զանազան պարսկական քաղաքներ ։ Այդ քարոզիչները պարսիկ ամբոխի շրջանում տարածել են իրենց հետ բերած զանազան կոչեր եւ լուսանկարներ. այդ լուսանկարները պատկերացնում են իբր թէ Բագուում եւ Կովկասի այլ վայրերում հայերի ձեռքով սպանուած Թուրքերի դիակները ։ Սակայն մեր դատաւորն ու Մուշտէյիդը եւ նոյն իսկ պարսիկ հասկացող դատաւորները այդպիսի կոչերին ու նկարներին այնքան էլ նշանակութիւն չեն տալիս, ի նկատի ունենալով այդ կոչերի ու պատկերների ի՞նչպիսի անձերի կողմից ցրուած լինելը ։ Այնուամենայնիւ, սակայն, աչքից բաց չպիտի թողնել այն հանգամանքը, որ պարսիկ ամբոխը միանգամայն ազատ չէ այդ կոչերի ու նկարների ազդեցութիւնից ։

Ձեզ յայտնի կը լինի, վերջերս Արդաբիլում հայերս ունեցել ենք մի սպանուած եւ մի վիրաւոր ։ Դրանից յետոյ այդ քաղաքի հայ բնակչութիւնը փակուեց իւր բնակարաններում շարունակ երկու շաբաթ, եւ միայն շահի ու դատաւորի, ինչպէս եւ մուշտէհիդի եւ քարգուզարի խիստ ու կտրուկ հնազիրները կարողացան կարգը վերականգնել տալ եւ այդ քաղաքի փոքրաթիւ հայերին հնարաւորութիւն ընձեռել զբաղուելու իրենց գործերով որի մասին վերջերս Արդաբիլի հայ հասարակութիւնը հեռագրեց Թաւրիզ ի գիտութիւն ։

Այս վերոյիշեալ դէպքից առաջ Ատրպատականը ողողուում էր Ռուսիայից ներմուծուող զէնքերով. գլխաւորապէս Բերդանի հրացաններով, որի հատը ծախում էին այստեղ 30 ր. ։ Իսկ այժմ. երբ մութ ոյժերը համոզուեցին, որ շատ դժուար է պարսկական հողի վրայ եւս իրագործել իրենց չարանենգ ծրագիրները, իրենց քիչ առաջ ծախած հրազէնները վերագնում են ա՛յն անձերից, որոնց ծախել էին, վճարելով իւրաքանչիւր Բերդանի հրացանի համար շատ թանկ, նոյն իսկ 100 ր. ։ Եւ այդ զէնքերը նորից ուղարկում են Կովկաս, որոնց մէջ կան պարսկաստանում չընուած զէնքեր ։

Պէտք է խոստովանած, որ տեղիս ռուսաց վաճառականապետ աղա Զաքարեա Նազարբէկեանը մեծապէս նպաստել է տեղիս եւ առհասարակ Ատրպատականի խաղաղութեան պահպանմանը՝ չինայելով իւր ջանքերը ոչ նիւթապէս եւ ոչ բարոյապէս եւ հարկ եղած ժամանակ դիմելով, օրուայ որ ժամին էլ որ լինի, տեղիս պաշտօնատար անձանց։

Հազար

ՊԱՊԸ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ

—o—

Հռոմի Պապը Մէլքիդներու Պատրիարքին միջոցաւ Սուլթանին ղրկած իր ձեռագիր նամակին մէջ ի մէջ այլոց հետեւեալ տողերը գրած է ։

«Անցեալները ի գործ դրուած վատ ոճրին վտանգէն Ձեր Կայս. Նուիրական անձին՝ երկնային շնորհով եւ պթութեամբ պահպանուելը երբ իմացայ, զգացած մեծ ուրախութիւնը անկեղծ խնդակցութիւններս հետ Ձեր Վեհ. Դահոյից մատուցանելու համար փափաքեցայ մասնաւոր պատուիրակ մը ղրկել Պոլիս ։»

«Կը փութամ շնորհաւորել ամբողջ կայս. հպատակներուն համար երջանիկութեան օր մը եղող Ձեր Վեհափառութեան դահակալութեան օրն ալ ։»

Սարկաստութեան, չողոքորդութեան եւ կեղծիքի գլուխ գործոց նկատուող այս տողերը գրողը այն անձն է որ՝ իբր Պետրոս առաքեալի յաջորդը գժոխքին եւ արքայութեան բանալիները իր ձեռքին մէջ բռնելու հաւակնութիւնը ունի եւ այդպէս կը հաւատացնէ տակաւին իր ապուշ հետեւողներուն. առանց մէջ, աւա՛ղ, բազմաթիւ հայեր ալ կը գտնուին ։

Թուրքիոյ մէջ. այսինքն Սուլթանին ճիրաններուն տակ, գտնուող հայ պատրիարքներ եւ եպիսկոպոսներ ճնշումի ու ստիպման տակ այդ իմաստով ուղերձներ ստորագրած էին անցեալ օր. եւ մենք զարմանք զգացինք անոնց իսկ այդ տկարութեանը համար, որ մասամբ արդարանալի էր. բայց Թիւրքիայէ դուրս, Հռոմայ առաքելական ազատ եւ հոյակապ գահուն վրայ նստող Պապին, Պիոս ԺԵ, այս ստորնաքարշ վարմունքին ի՞նչ ըսել պէտք է ։

—Բիւրաւոր քրիստոնեաներ միայն քրիստոնեայ ըլլալուն համար խողխողել տուող իսլամութեան Խալիֆէին առջեւ այս աստիճան քծնող եւ ստորնացնող քրիստոնեաներու խալիֆէին երեսը թքնելէ զատ ուրիշ չունինք ըսելիք ։

ԱԶԳԱՅԻՆ

Գոլոսոյ ոճրագատ ատեանը հետեւեալ վճիռը արձակած է Աբիկ Ունճեանի սպանման դատին քննութենէն յետոյ.

Խոովարարական եւ յեղափոխական ստորին եւ ցած (!) գաղափարներէ մղուած վաճառական Աբիկ էֆէնտի Ունճեանը սպանած եւ Վարասիտ անուն անձ մը վիրաւորած ըլլալու ամբաստանութեամբ դատապարտուած Կարապետ Վարդանեան եւ իր ընկերները Յովհաննէս Աֆարեան, Ստեփան Սերոբէ, Երուանդ Զաւուշեան եւ փախստական Լեւոն Քիրիշճեան ըստ սովորութեան Ոճրագատ Ատեանին առջեւ հրապարակաւ դատուելով, հաստատուեցաւ թէ՝ վերոյիշեալներէն Կարապետ Վարդանեան՝ խոովարարական ցած եւ ստորին գաղափարէ մղուած սպանած էր Աբիկ էֆէնտին, իսկ Յովհաննէս Աֆարեան, Ստեփան Սերոբէ եւ Լեւոն Քիրիշճեան անուն անձերն ալ խոովարարներու դասակարգին պատկանելնին հաստատուած ըլլալով, ասոնցմէ Կարապետ Վարդանեանը պատժական Օրինագրքին 56 րդ. յօդուածին եւ փախստական Լեւոն Քիրիշճեանը նոյն Օրինագրքին 58 րդ. յօդուածին տրամադրութեան համաձայն՝ մահուան, Ստեփան Սերոբէ, նոյն Օրինագրքին 58 րդ. յօդուածին տրամադրութեան համաձայն՝ ցմահ բերդարգելութեան եւ Յովհաննէս Աֆարեանը նոյն Օրինագրքին 58 րդ. յօդուածին տրամադրութեան համաձայն տասնեւհինգ տարուան թիապարտութեան, դատապարտուեցան ։ Իսկ Օրինաց 31 րդ. յօդուածին տրամադրութեան համաձայն փախստական Լեւոն Քիրիշճեանը պիտի զրկուի քաղաքային իրաւունքներէ եւ ստացուածքները յԱրքունիս պիտի դրաւուին, իսկ Երուանդ Զաւուշեան այս վերջիններուն հետ ո եւ է յարաբերութիւն ունեցած ըլլալը չհաստատուելով անպարտ արձակուեցաւ ։ Եւ ներկայիս Արթինի ու սափրիչ Սիմոնի համար նոր հետքեր հրեւան եկած ըլլալով, անոնց համար ալ օրինական հետապնդում կատարելու վճիռ եւ որոշում տրուեցաւ ։

—Պարսկաստանի Սպահան քաղաքին մէջ Նորահաստատ Քանանեան վարժարանին բացումը կատարուած է սեպտ. 25 ին եկեղեցական արարողութեամբ, ի ներկայութեան հիւպատոսներու եւ ժողովրդական խուռն բազմութեան ։ Քանանեանի այս բարերարութեան շնորհիւ Պարսկահայութիւնն ալ իր երկրորդական վարժարանը կունենայ որուն այնչափ պէտք կար ։

—Տ. Մկրտիչ Փորթուգալեան Ամերիկայի հայաբնակ քաղաքները կայցելէ եւ սկսած է ատենաբանութիւններ ընել, միշտ զգուշանալով կուսակցականներու սխալները քննադատելէ ։ Կերեւայ թէ Տ. Փորթուգալեան իր սա ծերութեան տարիքին մէջ այլեւս չուզեր կիրքեր գրգռելու գնով ճշմարտութիւններ ջատագովել և կեղծիքներ ու սխալներ պարսաւել ։

—Ամերիկայէն ինն դաշնակցականներ Զայնի միջոցաւ հրապարակաւ կը բողոքեն Դաշնակցութեան Պիւրոյին դէմ թէ

1) Ինչո՞ւ Վարդոյի ամբաստանութիւնները և մերկացումները անպատասխան կը ձգէ

2) Ինչու սպառնալիքներ կըլլան Վարդոյի կեանքին դէմ.

3 Կը բողոքեն Դրշակ ի 9 րդ թիւին մէջ տեսնուած «պաշտօնական ազդ»ին դէմ, ուր սպառնալիքի բնոյթ կը տեսնեն ։ Եւ իբր դաշնակցականներ կը պահանջեն յանձնաժողովով մը քննել Վարդոյի գործը եւ յետոյ պատժել եթէ յանցանքը հաստատուի,

—Պուրկազի թաղականութեան վերջին կռիւները խաղաղեցնելու և քննել ու տեղեկագրելու պաշտօնով Պուրկազ գացող ՏԷր Վահրամ հայր քաղաքս վերադարձաւ իր պաշտօնը յաջողապէս կատարելէ և խաղաղութիւնը վերահաստատելէ յետոյ ։ Զուտ եկեղեցական գործի մը կառավարութեան միջամտութիւնը հր-

բաւիրոզ պարոնը հրապարակաւ նշանակել չենք ուզեր այս անգամ, յուսալով թէ իր սխրագործութեանց վերջինը եղած ըլլայ այդ։

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻՒՐՔԻԱ

Օրմանեան Պատրիարքն վէ Բաթրիգհանէ մէճլիսլէրինին Մուլթանա վէ Պապը Ալիէ հէր տաաթ սատագաթ պէյան իթմէլէրի խիլաֆընա օլարագ, կէչէն կիւն հիւքիւմէթ թարաֆընատան Գում-Գարու Պատրիարքարանը եօղլանըլմըշ վէ տըգգաթլէ թահարբի օլընմըշ տըր։ Օրմանեան հիւքիւմէթին քէնտիսինտէն տախի շիւբհէսի օլըզընատան տօլայը բէք միւթէէսիւֆ վէ մահճուպ օլմուշ։

Սթանպոլտա միլլէթտաշլարը-մըզա գարշը տէվամ իտէն թէզեիգաթ ուճ տէրէճէյէ եէթիշմիշ տիր, ժանտարմալար վէ բօլիսլէր սոգագլարտա բասթ կէլտիքլէրի էրմէնիի սիւվալըզ վէ սէպէպսիզ թութուպ, 30—40 քիշի պիր բօսթա եաբարագ Անատօլույա կէօնտէրմէքտէ տիրլէր։

Հապսհանէլէրտէ պուլընտն էրմէնիլէր իւզէրինէ զատտարուլըգլար իճրա օլընտըզընտան վէ ֆէվգէլատէ թէզեիգաթտան տօլայը էլչիլէրտէն պիր գաչը Պապը Ալիէյէ բրօթէսթ իթմիշլէր։ Օրմանեանընն միւրաճաաթլարը սէմէրէսիզ գալմագտա տըր։

—Եըլտըզտա մահպուս պուլընան էրմէնիլէրտէն իքիսինին ճէսէտի բօլիսլէր 10-12 կիւն մուգատտէմ կիճէ վագթը Պէշիկթաշ էրմէնի մէզարլըզընա կէօթիւրուպ ճէպրէն կէօմմիշլէր տիր։ Քէզա էվվէլքի կիճէ Շիշլիտէքի բում մէզարլըզընա բօլիսլէր սանտըգլէ պիր էօլիւ կէօթիւրուպ տէֆն իթմէք իսթէրլէր։ Մէզարճը բէսմի քեաղրտ իսթէր, ֆագաթ անընն պու թալէպինէ էհէմմիյէթ վէրմէյուպ, քէնտիլէր կէօմէրլէր։ Բօլիսլէրին կիթմէսինտէն սոնրա՝ մէզարճը մէզարը աչարագ, սանտըգտա՝ պուրնու տօտաղը քէսիլմիշ վէ կէօղէրի չըգարըլմըզ պիր էօլիւ պուլուր։ Քիմ օլըզը անլաշըլմաղ։ Շու հալտէ եըլտըզ սէրայը մահպուսլարը իրբրալյան պիր պաթագհանէյէ թահվիլ օլընմըշ տիյէպիլիրիզ։

—1903 սէնէսինտէն պէրու Էտիրնէտէ թէշքիլ օլընան մահքէմէյի ֆէվգէլատէ՝ գոմիթա օլմագ թէօհմէթի իլէ 296 քիշի (7 գատրն) մուհաքէմէ իթմիշ վէ պունլարտան 136 սընը էնվաի ճէզալարա մահքիւմ էյլէմիշ տիր։ Ֆիկէրլէրի պէրաաթ իթմիշլէր։

—Մ'ադէթոնիատա բում չէթալարը, էլչիլէրին թալէպի իւզրէ, թաագիպ օլընըյօրլար։ Պիր գաչ մահէլտէ թիւրք ասքէրլէրի վէ բում չէթալար պէյնինտէ միւսատէմէլէր վուգու պուլմուշ տըր։

Պուլկար վէ Բում չէթալար պէյնինտէ տախի միւտարէպէլէր վուգու պուլարագ, Պուլկարլար կէրի չէքիլմիշլէր։

—Պիր պուլկար չէթասը Գումանց նամ քէօյիւնէ կիրէրէք, պիր գաչ էվլէր եագմըշ 1 օրմանպէքճիսի վէ 2 սըրպ գաթլ իթմիշ։

Մ'ադէթոնիանընն սէր գոմիսէրի Հիլմի բաշա պուլկար քէօյլէրինի մուհաֆաղա իթմէք պէհանէսի իլէ՝ ասքէր բօսթալարը Լիէսիս իթմէքլէ՝ հէր պիր էվտէն 50 զրշ. մէսարիֆ իշիւն վէրկի թախսիս իթմիշ տիր։ Պուլկար քէօյլիւլէրի ասքէրլէրին զատը ու զալիմլիքլէրինտէն թաճիզ վէ մէղքիւր էլլիշէր զրշ. ը էօտէմէքտէն աճիզ օլըզգլարընը պէյանլէ, ասքէրլէրին քէօյլէրտէն գալտըրմասընը ըէճա իտէյօրլար։

—Գոնթրոլ իշիւն տէվլէթլէրտէն թային օլընան մէմուրլար Հիլմի բաշա իլէ իսթիշարէ իթմէք իշիւն Սէլանիքտէն Ս.քիւպէ կիթմիշլէր. ֆագաթ բաշա անլէրին կէլմէսինի տույարագ, Ս.քիւպտէն շըգմըշ զիրա անլէր իլէ կէօրիշմէմէք իշիւն Պապը Ալիտէն թալիմաթ ալմըշ ըմըշ։

—Սըրպ սինօրընտա արնավուտարընն վէ թիւրք ասքէրլէրին թէճավիւզաթը սէպէպլէ Սերպիանընն իւլթիմաթոմընա ճէվապէն, Պէյկրատտաքի թիւրք էլչիսի սըրպ հիւքիւմէթինտէն ափվ իսթիրհամ իթտի վէ միճրիմլէրին ճէզալանաճաղընը վատէյլէտի. ֆագաթ զարարլարընն թաղմինի իշիւն էլան ճէվապ վէրիլմէմիշ տիր։

—Եէմէն օրտուսընընն սէր գոմանտանը Ֆէյզի բաշա Զաֆէր գալէսինի ասրլարընն էլինտէն ֆէթհ իթտիկինի պիլտիրմիշ տիր։ Ֆէյզի բաշա պու եէնի ֆիթուհաթտան սոնրա Սանտայա ավտէթլէ՝ Ճէպէլի—Սիահարա վէ Սուուտա ատըլարընա գարշը կիթմէք փշիւն՝ օրտուսընը հաղըրլայաճագ ըմըշ։

ՏԱԽԻԼԻ

Սոֆիատա Մէճլիսի Մէպուսան (Սօպրանիէ) պուկիւն աչըլաճագ տըր։ Ֆէխամ. Բրէնս Էվրոբատա պուլընտըզը ճիհէթլէ, Անա վէքեալէթէն մէճլիսի վիւքէլա ըէյիսի քիւշատ իտէճէք տիր։

—Եօլ բարասը իշիւն պու սէնէ տախի ճէզա էօտէմէմէք իշիւն, հէրքէս կիտուպ պէլէտիյէ մըխթարլարընատան պիրէր տէքլարացիա ալմալը տըր։

Նոյեմբեր օնընա գատար մէզքիւր տէքլարացիայը եազուպ՝ մըխթարա թէսլիմ իթմէյէնլէր ճէզալի նագտիյէ էօտէլէճէք տիրլէր։

ՐՈՒՍԻԱ

Մ'օսկուա, Խարքով վէ սայիր պաղը չէհիրլէրտէ շըմէն տըֆէր վէ թրանվայ մէմուրլարը թաթիլ մէշղուլիյէթ իթմիշ տիրլէր։ Իշճիլէր պաղը սթասիօնլարը վէ բօսթհանէլէրի պասուպ մուխապէրաթը քէսմէքտէ օլտըգլարընատան, տսքէրլէ վուրուշմագտա տըրլար։ Մէքթէպլիլէր տախի էլան տէրսէ կիթմէյօրլար։

Պաղը չըմէնտըֆէր գաթարլարը եօլլարտա պըրագըլմըշ տըրլար։ Սթասիօնլարտա պինլէրճէ եօլճըլար թըրէնին գալդըմասընա, եախոտ էէթիշմէսինէ կիւնլէրճէ պէքլէմէկէ մէճպուր օլիյօրլար։ Մէմուրլար իշլէմէյօրլար։ Այըն 26ինէ գատար Բէթերսպուրկա կիտէն պիթիւն թըրէնլէր թաթիլ իտէճէքլէր։

Պու իսթիլալաթտան էհալինին մագսէտի Տումա աղալարընն ինթիխապաթընա հէր քէսին ըէյ [քուէ] վէրմէք հագգընը հիւքիւմէթէ թանըթմագ վէ մաթպուաթա վէ միթինկլէրէ սէրպէստիյէթ վէրիլմէքտէն իպարէթ տիր։

—Եէնի պիր գանուններմէ մուճէպինճէ, պիթիւն Բօլոնիա էհալիսի թարաֆընատան Տումայա 36 մէպուս ինթիխապ օլընաճագ տըր։

Մ'ԻԹԼԻՆԷՎԻԼ

Բումանիա վէ Եունանիստան հիւքիւմէթլէրի պէյնինտէ զուհուրա կէլմիշ օլան մէսէլէլէրի հալլ իթմէք իշիւն Լահէյտէքի հէյէթի հաքէմիյէսինէ իհալէսի թէքլիֆ օլընը իսէտ, Բումանիա հիւքիւմէթի Լահէյ կիթմէքտէն իմթինա իտէյօր։

—Մանչուրիանընն բուս վէ ճաբոն ասքէրլէրինտէն թախլիյէսի պու այըն 16 սընտա պաշլայըպ, ալթը այտան խիթամ պուլմուշ օլաճագ տըր։

—Ալմանիա վէ Ֆրանսա պէյնինտէ շու սրբա ճէրէյան իտէն մէսէլէլէր հագգընտա՝ Իթալիա խարիճիէ նազրը պիր թարաֆտան Ֆրանսայա թարաֆ թութմագտա վէ տիկէր թարաֆտան իթթիֆագը միւսէլլէսէյէ սատըգ գալաճաղընը պէյան էյլէմէքտէ օլուպ, մուալլագ վէ թութուլմաղ պիր բօլիթիգա թաագիպ իթմէսինտէն տօլայը, Ֆրանսա վիւքէլա ըէյիսի Բոմատաքի ֆրանսըզ էլչիսի վասիթասը իլէ՝ թէէուֆինի պէյան իթմիշ տիր։

«ՕԹԷԼԼՕ»

Դերասան Տ. Կ. Գալֆաեան կը խնդրէ ծանուցանել թէ ամսոյս 20 ին «Օթէլլո»ն պիտի ներկայացնէ Սաէտինէնիէ սրահին մէջ։

ԹԻՒՃՃԱՐՈՒԹԻՒՆ

ՎԱՌՆԱ, Հոկտ. 15

ԶԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՑ

Վակօն	54–60 լիպ.	10. / 11. 50
Արապա	52–62 լիպ.	9.50 /12

ԱՐԲԱ.

Վակօն	100 քիլօ	11. 20 /11. 50
Արապա	42–47 լիպ.	7. /7. 20
ԵՈՒԼԱՖ արապա	33/36 լպ.	4. 70/4.80
Վակօն	100 քիլօ	11. 20/11. 40
ՖԱԱՍՈՒԼԵԱ. արապա	100քիլօ	25—/29
ՌԱԲԻՃԱ.	100	19. 20 19.60
Արապա	100 քիլօ	16—18
ՏԱՐԸ արապա		13/ 14
ՔՕԼՕՋ արապա	55–60 լպ.	11./12.20
ՄԻՍԻՐ	57–58 լպ.	8–20/8–60
»	100 քիլօ	11. 20- 11. 60
ՁԱՎՏԱՐ արապա		9. 50 / 10.
»	100 քիլօ	11. 80 /12.

Կիւնտէ 50—60 վակօն վէ 2—200 արապա կէլմէքտէ. վակօն մուամէլէսի նարօլէօն20 ֆր. արապա մուամէլէսի նարօլէօն 20. 20

ՍԱՐԲԱՖԻՃԷ

նարօլէոն 20, 20 ֆրանք

Օսմ. լիրասը 22, 75 ալթուն ֆրանք

ՊԱԳԱԼԻՃԷ

Վարնա բիացասընտա պագգալիյէ մալլէրին պու. կէնանքի ֆիյաթբասթուն ֆրանք իլէ։

ԳԱՀՎԷ	2.10/ 2.20
Շէքէր նէմցէ	73
Շէքէր քէսմէ] սանտրգ	36.
Բիրինճ ճէնօվա չուվալը	42
» Ֆիլիպէ »	44
» Իսկիլիզ »	28. 50
Ռիզօն »	49.
ԿԱՋ Սանտրգ	12.
ՁԷՑԹԻՆ հաղը քիլօ	1.—1. 10
ԳՈՒՐՈՒ իւզիւմ	30

ԶԷՄԷՆ

—o—

Գայիսէրի պասրբմասը թէլթիպի իլէ պասրբմա եարանլարընն հէր հալտէ չէմէնէ իղթիզալարը օլաճաղընատան, իարիս վէ թազէ չէմէն ալմագ իսթէյէնլէր Վառնատա Տ. Ց. Ճանկիւլեանա վէ Բուսճուգտա Տ. Ղուկաս Օղանեանընն պագալ տիւքանընա միւրաճաաթ իթմէլի տիրլէր։

ԹԷՑ ԹԷ՛Ց ԹԷ՛Ց

—o—

Ընտիր եւ հոտաւէտ զուտ չինական թէյ գործածել ուզող փափկաճաշակ յաճախորդներ թող դիմեն Տ. Հրանտ Երկանեանի խանութը Բրեսլավքա փողոց թիւ 24, Հայկական Ընթերցարանին կից, հոս պիտի գտնեն նաեւ ընտիր գուլպաներ, ֆանէլաներ եւ այլն։

Одговорник А. Курбетиянъ
печатница Д. Тодоровъ и С-ие—Варна